

**ԽՈՐՀՐԴԻ 1990 թվականի մայիսի 29-ի ՀՐԱՀԱՆԳ**

**Աշխատողների մեջքի վնասվածք ստանալու ռիսկի առկայության դեպքում ձեռքով բեռների փոխադրման ընթացքում առողջության պահպանման և անվտանգության ապահովման նվազագույն պահանջների մասին**

**(89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով չորրորդ առանձին հրահանգ)  
(90/269/ԵՏՀ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով ընդունի հատկապես աշխատանքային միջավայրի բարելավումը խթանելուն ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով,

քանի որ, համաձայն այդ հոդվածի, նման հրահանգներով չպետք է սահմանվեն այնպիսի վարչական, ֆինանսական և իրավական սահմանափակումներ, որոնք կարող են խոչընդոտել փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

քանի որ «Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման վերաբերյալ» Հանձնաժողովի ծրագրին առնչվող հաղորդակցությամբ (4) նախատեսվում է այնպիսի հրահանգների ընդունում, որոնք ուղղված են աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության երաշխավորմանը,

քանի որ Խորհուրդը 1987 թվականի դեկտեմբերի 21-ի «Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման մասին» որոշմամբ անդրադարձել է

Խորհրդին մոտ ապագայում «Ձեռքով ծանր բեռների փոխադրման ընթացքում առաջացող ռիսկերից պաշտպանելու մասին» հրահանգ ներկայացնելու Հանձնաժողովի մտադրությանը,

քանի որ առողջության պահպանման և անվտանգության ապահովման առավել բարձր մակարդակ երաշխավորելու նվազագույն պահանջները կարևոր են՝ աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար,

քանի որ սույն Հրահանգն «Աշխատավայրում աշխատողների առողջության և անվտանգության բարելավմանն ուղղված միջոցների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով առանձին հրահանգ է (6) համարվում. քանի որ վերոհիշյալ հրահանգի դրույթները միանգամայն կիրառելի են ձեռքով բեռներ փոխադրելու ոլորտում, հատկապես երբ առկա է աշխատողների՝ մեջքի վնասվածք ստանալու ռիսկ՝ չհակասելով սույն Հրահանգում ներառված առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

քանի որ սույն Հրահանգով գործնական քայլ է կատարվում՝ ներքին շուկայի սոցիալական ուղղվածությունը հաստատելու համար,

և քանի որ Խորհրդի 74/325/ԵՏՀ որոշման համաձայն (7)՝ Հանձնաժողովը խորհրդակցում է Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ՝ այս ոլորտում առաջարկություններ մշակելու նպատակով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## **ԲԱԺԻՆ I**

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### *Հոդված 1*

##### **Կարգավորման առարկան**

1. Սույն Հրահանգը, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով չորրորդ առանձին հրահանգ է համարվում, սահմանում է աշխատողների՝ հատկապես մեջքի վնասվածք ստանալու ռիսկի առկայության դեպքում ձեռքով բեռների փոխադրման ընթացքում անվտանգության ապահովման և առողջության պահպանման նվազագույն պահանջներ:
2. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են 1-ին պարբերության մեջ նշված ոլորտի նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

#### *Հոդված 2*

##### **Սահմանումը**

Սույն Հրահանգի նպատակներով «ձեռքով բեռների փոխադրում» նշանակում է մեկ կամ մի քանի աշխատողների կողմից բեռների տեղափոխում կամ բեռների հետ կապված այլ լրացուցիչ աշխատանքների կատարում՝ ներառյալ բեռներ բարձրացնելը, դրանք ցած դնելը, հրելը, քաշելը, բեռ տանելը կամ տեղաշարժելը, որը իրեն բնորոշ հատկությունների կամ անբարենպաստ էրգոնոմիական պայմանների հետևանքով աշխատողների՝ հատկապես մեջքի վնասվածք ստանալու ռիսկ է պարունակում:

## ԲԱԺԻՆ II

### ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Հոդված 3

##### Ընդհանուր դրույթ

1. Գործատուն ձեռնարկում է համապատասխան կազմակերպչական միջոցներ կամ կիրառում է համապատասխան միջոցներ, մասնավորապես, մեխանիկական սարքեր՝ խուսափելու համար աշխատողների կողմից՝ ձեռքով բեռների փոխադրման անհրաժեշտությունից:
2. Եթե հնարավոր չէ խուսափել աշխատողների կողմից ձեռքով բեռների փոխադրման անհրաժեշտությունից, ապա գործատուն ձեռնարկում է համապատասխան կազմակերպչական միջոցներ, կիրառում է համապատասխան միջոցներ կամ նման միջոցներով է ապահովում աշխատողներին՝ նվազեցնելու համար ձեռքով բեռների փոխադրման ընթացքում առաջացող ռիսկը՝ հաշվի առնելով I հավելվածը:

#### Հոդված 4

##### Աշխատակայանների կազմակերպումը

Եթե հնարավոր չէ խուսափել աշխատողների կողմից ձեռքով բեռների փոխադրման անհրաժեշտությունից, ապա գործատուն աշխատակայանները կազմակերպում է այնպես, որ բեռների նման փոխադրումը լինի հնարավորինս ապահով և չվնասի առողջությանը, ինչպես նաև

ա) հնարավորության դեպքում նախօրոք գնահատում է տվյալ աշխատանքին առնչվող առողջության ու անվտանգության պայմանները և, մասնավորապես, ուսումնասիրում է բեռներին բնորոշ հատկանիշները՝ հաշվի առնելով I հավելվածը.

բ) համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ խուսափելու համար աշխատողների՝ հատկապես մեջքի վնասվածք ստանալու ռիսկից կամ նվազեցնելու այն, մասնավորապես, հաշվի առնելով աշխատանքային միջավայրն ու աշխատանքային գործունեության պահանջները և հիմք ընդունելով I հավելվածը:

## Հոդված 5

### Հղում II հավելվածին

89/391/ԵՏՀ հրահանգի 6 (3) (բ) հոդվածը, ինչպես նաև 14-րդ և 15-րդ հոդվածները կիրարկելու նպատակով պետք է հաշվի առնել II հավելվածը:

## Հոդված 6

### Աշխատողներին տեղեկատվությունը և նրանց ուսուցումը

1. Չհակասելով թիվ 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածին՝ աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները տեղեկացվում են աշխատավայրում սույն Հրահանգի համաձայն անվտանգության ապահովմանն ու առողջության պահպանմանն ուղղված՝ ձեռնարկվող բոլոր միջոցների մասին:

Գործատուները պետք է ապահովեն, որ աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները ստանան ընդհանուր ցուցումներ և, հարկ եղած դեպքում, ճշգրիտ տեղեկություններ հետևյալի մասին՝

– բեռի քաշը.

– ծանրության կենտրոնը՝ ամենաձանր մասում, երբ փաթեթը բեռնվում է անկառավարելի դիրքով:

2. Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 12-րդ հոդվածի դրույթներին և հաշվի առնելով I և II հավելվածները՝ գործատուները պետք է ապահովեն, որ աշխատողները պատշաճ ուսուցում անցնեն և տեղեկություններ ստանան բեռները ճիշտ փոխադրելու, ինչպես նաև այն դիսկերի մասին, որոնց նրանք կարող են ենթարկվել, հատկապես այն դեպքերում, երբ իրենց տրված հանձնարարությունները ճշգրիտ կերպով չեն կատարվում:

## Հոդված 7

### Աշխատողներին խորհրդատվությունը և նրանց մասնակցությունը

Աշխատողներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին խորհրդատվությունը և նրանց մասնակցությունը իրականացվում է 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի, ինչպես նաև դրա հավելվածների համաձայն՝ սույն Հրահանգով կարգավորվող խնդիրների առումով:

### ԲԱԺԻՆ III

#### ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

##### Հոդված 8

##### **Հավելվածներին համապատասխանեցումը**

I և II հավելվածներին կատարված խիստ տեխնիկական բնույթի փոփոխությունները՝ ձեռքով բեռներ փոխադրելու ոլորտում, որոնց անհրաժեշտությունն առաջացել է՝ ելնելով միջազգային կարգավորումներում կամ տեխնիկական մասնագրերում տեխնիկական առաջընթացից, ինչպես նաև գիտության մեջ կատարված փոփոխություններից, ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

##### Հոդված 9

##### **Եզրափակիչ դրույթները**

1. Անդամ պետություններն ուժի մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերը և վարչական ակտերը 1992 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ: Նրանք դրա մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են կամ արդեն ընդունել են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ նշելով աշխատողների և գործատուների տեսակետները:

Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ և Տնտեսական ու սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ պարբերական հաշվետվություն է ներկայացնում՝ հաշվի առնելով 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները:

#### *Հոդված 10*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 1990 թվականի մայիսի 29-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Բ. ԱՀԵՐՆ

1) ՊՏ թիվ C 117, 04.05.1988թ., էջ 8:

2) ՊՏ թիվ C 326, 19. 12. 1988թ., էջ 137 և ՊՏ թիվ C 96, 17.04.1990թ., էջ 82:

3) ՊՏ, թիվ C 318, 12. 12. 1988թ., էջ 37:

4) ՊՏ թիվ C 28, 03.02.1988թ., էջ 3:

5) ՊՏ թիվ C 28, 03.02.1988թ., էջ 1 (6) ՊՏ թիվ L 183, 29.06.1983թ., էջ 1:

7) ՊՏ թիվ L 185, 09.07.1974թ., էջ 15:

## ՀԱՎԵԼՎԱԾ I

(\*) ՀՂՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ (3 (2) հոդված, 4 (ա) և (բ) հոդված և 6 (2) հոդված) 1. Բեռի հատկանիշները

Բեռի փոխադրումը ձեռքով վտանգավոր է և կարող է հատկապես մեջքի վնասվածք հասցնել, եթե այն՝

- չափից ծանր կամ չափից մեծ է.
- չափազանց մեծ է կամ այն դժվար է ձեռքով բռնել.
- անկայուն է կամ պարունակությունը կարող է տեղաշարժվել.
- դրված է այնպիսի դիրքում, որի համար պահանջվում է պահել կամ շարժել բեռը բեռնատեղից հեռու կամ պահանջվում է թեքել կամ պտտել բեռնատեղը.
- իր ուրվագծի և (կամ) ամրության պատճառով կարող է վնասվածք հասցնել աշխատողին, հատկապես այն դեպքում, երբ բախում տեղի ունենա:

2. Ֆիզիկական ուժի անհրաժեշտությունը

Ֆիզիկական ուժի գործադրումը կարող է հատկապես մեջքի վնասվածք ստանալու ռիսկ պարունակել, եթե այն՝

- շատ ջանքեր է պահանջում.
- հնարավոր է իրականացնել, միայն բեռնատեղը պտտեցնելու դեպքում.
- ենթադրում է բեռի կտրուկ տեղաշարժ.
- կատարվում է, երբ մարդու մարմինն անհավասարակշիռ դիրքում է գտնվում:

3. Աշխատանքային միջավայրի բնութագիրը

Աշխատանքային միջավայրը, կախված իր բնույթից, կարող է մեծացնել հատկապես մեջքի վնասվածք ստանալու ռիսկը, եթե՝

- բավարար չափով տարածք չկա՝ հատկապես ուղղահայաց դիրքում աշխատանքային գործունեությունն իրականացնելու համար.
- հատակը հարթ չէ, որի պատճառով աշխատողը կարող է վայր ընկնել կամ այն սայթաքուն է աշխատողի կոշիկների համար.



– աշխատանքի վայրը կամ աշխատանքային միջավայրը թույլ չի տալիս փոխադրել բեռները ապահով բարձրության վրա կամ աշխատողը հարմար դիրք չի կարողանում ընդունել դրանք փոխադրելիս.

– հատակի կամ աշխատանքային մակերեսի բարձրությունների միջև տարբերություն կա, որի հետևանքով բեռը փոխադրվում է տարբեր բարձրությունների վրա.

– հատակը կամ ոտքի տարածքն անկայուն է.

– չեն ապահովվում ջերմաստիճանի, խոնավության կամ օդափոխության բավարար պայմաններ:

#### 4. Աշխատանքային գործունեության պահանջները

Աշխատանքային գործունեությունը կարող է հատկապես մեջքի վնասվածք ստանալու ռիսկ պարունակել, եթե այն ներառում է հետևյալ պահանջներից մեկ կամ մի քանիսը՝

– չափից հաճախակի և չափից երկարատև ֆիզիկական ուժի գործադրում, որի ընթացքում հատկապես գործում է ողնաշարը.

– մարմնի լարվածության թուլացման կամ վերականգնման ոչ բավարար ժամանակահատված.

– բեռների չափից շատ բարձրացում, իջեցում կամ տարածության մեջ տեղափոխում.

– գործընթացով պայմանավորված՝ աշխատանքի արագություն, որն աշխատողը չի կարող փոփոխել:

(\* ) Բազմագործոն վերլուծություն կատարելու նպատակով, համընթաց հղում պետք է կատարվի I և II հավելվածներում նշված տարբեր գործոններին:

## ՀԱՎԵԼՎԱԾ II

(\*) ՌԻՍԿԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ (5-րդ և 6 (2) հոդվածներ): Աշխատողը կարող է ռիսկի ենթարկվել, եթե նա՝

- ֆիզիկապես ունակ չէ՝ տվյալ աշխատանքը կատարելու համար.
- կրում է ոչ համապատասխան հանդերձանք, կոշիկ կամ այլ անձնական օգտագործման պարագաներ.
- չունի բավարար կամ համապատասխան գիտելիքներ և ուսուցում չի անցել:

(\*) Բազմագործոն վերլուծություն կատարելու նպատակով համընթաց հղում պետք է կատարվի I և II հավելվածներում նշված տարբեր գործոններին: